

ՀԱՌԱՐԱՆ ՄԻԷՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 22 ՄԱՅԻՍ, 1930

ԹԻՒ 10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՅԻՒՆ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ ԵՒ ՀԱՅ ԱԻԵՏ.ՆԵՐԸ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՏԵՐԸ ԻՄ ՀՈՎԻՒՍ Է

ՎԵՐ. Մ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԵՂԻՇԻ ՊԱՏՐԻԱՐԻ ԴՈՒՐԵԱՆԻ

ՌՇՏՈՒՆԻ

ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԴՊՐՈՅ

ՎԵՐ. Յ. ՇՆՈՐՀՕՐԵԱՆ

ՄԱՀԱԹՄԱ ԿԱՆՏԻ

ՎԵՐ. Բ. ԼԵՒՈՆԵԱՆ

ԱՂՕԹՔԻ ՄԸ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Յ. Պ.

ԱՅԼԵԻԱՅԼ

ՄԻՋԱԶԳԻՍՅԻՆ ՄԻՍԻՑՆԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՏԵՂԱԽՈՐՈՒՄԸ

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԴՈՂԷՊ» ՀԱՂԷՊ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազատ քաղաքացիական Չարս Տիֆլիսի
գրադարանին

ԳԼՈՒԽ Գ.

ԵՐԿՐՈՐԴ ՈՊԻՆ

Քոյր ու եղբայր զինքը կրակին քով
նստեցուցին, իսկ հայրը անոր համար
քիչ մը տաքուկ լէմոնա ապարաստե-
լու համար սրճեփին մէջ քիչ մը ջուր
եւայլն լեցուց, դպալով աղէկ մը խառ-
նեց ու կրակարանին մէջ դրաւ որ տաք-
նայ:

Պարոն Պետրոս այն ատեն իր փոքր
քրոջն ու եղբոր հետ հացազործին փու-
ռը գացին խորոված սազը բերելու, եւ
քիչ վերջ փերադարձան չափազանց եր-
ջանիկ, որովհետեւ սազը եփած էր ու
իրենք էին գայն բերողները, կարծես
թէ սազը թուռններուն ամէնէն հազ-
ուադիւտը ըլլար:

Տիկին Գրէչիթ մօր ջուրը պատրաս-
տած էր, Պարոն Պետրոս փաթաթէսը
կը ճզմէր անհաւատալի ուժով մը, Օր.
Պէլինտա սեղանը շտկեց, Մարթա ա-
մաններուն փոշին սրբեց, Պօպ փոքրիկ
Թիմը իր քովը սեղան նստեցուց, երկու
փոքրիկները աթոռները շարեցին, ու
ամէն ոք իր տեղը նստեցաւ Ծնունդի
սեղանին բոլորտիքը. որքա՛ն երջանիկ
էին երբ ազօթքը մատուցուեցաւ: Տիկ.
Գրէչիթ դանակը ձեռք առաւ ու սաղին
կուրծքը ճեղքեց, ի՞նչ հրաշալի տեսա-
րան, ամէնքն ալ ապշած կը նայէին,
մինչեւ իսկ փոքրիկ Թիմ «կեցցէ» ըսե-
լով դպալով սեղանին զուարթ հարուած
մը տուաւ:

Ասանկ սազ մը երբեք չէր տեսնուած,
Պօպ կ'ըսէր թէ անկարելի է որ այսչափ
գեղեցիկ եփուած սազ մը տեսնուի, ա-
նոր համը, մեծութիւնը, աժանութիւն-
ը ընդհանրապէս հիացման առարկայ

դարձած էին: Ու այդ ընտանեկան
հաճելի սեղանին շուրջ բոլորուած ու-
րախ ու երջանիկ ամէնքն ալ կերան,
կշտացան թէեւ շիտակը խօսելով, Ծը-
նունդի այս «խնճոյքը» մեծ ընտանիքի
մը համար խիստ փոքր ճաշ մըն էր:

Վերջապէս ճաշը վերջացաւ, սեղանին
ծածկոյցը մաքրուեցաւ, խնձով ու նարինջ
դրուեցաւ սեղանին վրայ. կրակարանը
վառեցաւ, եւ ամբողջ ընտանիքը նըս-
տեցան կրակին բոլորտիքը. խոշոր բուռ
մը շագանակ լեցուցաւ կրակարանին
մէջ, ու սկսաւ ընտանեկան ամենաքաղ-
ցըր խօսակցութիւնը, մինչդեռ շագա-
նակները ախորժարիկ սուլոցներ արձա-
կելով կը ճեղքօղէին կրակին մէջ: Այն
ատեն հայրիկը ոտք ելաւ, ասն ամենէն
գեղեցիկ սկուտեղը մէջտեղ բերաւ, բո-
լոր բաժակները կտրեց շարեց (տոնք
երկու պարզ բաժակէ եւ բռնեյիք տեղը
կտրած գաւաթէ մը կը բաղկանային),
եւ անոնց մէջ տաքօք լէմոնատ լեցնե-
լով՝ «սիրելիներս», ըսաւ, «Ծնորհաւոր
Ծնունդ մեր ամենուս, Աստուած օրհնէ
մեզ». ու մէկիկ մէկիկ խմեցին հայրիկին
մատուցած լէմոնատէն, եւ իւրաքանչիւ-
րը կրկնեց, «Ծնորհաւոր Ծնունդ»: Ամե-
նէն հաջորդ փոքրիկ Թիմն ալ խմեց ու
ըսաւ. «Աստուած օրհնէ մեզ ամենքս ալ»:
Խեղճ Թիմը իր հօրը ճիշդ քովիկը նստած
էր իր աթոռին վրայ, զէմքը խիստ նի-
հար, ձեռքերը նոյնպէս, իսկ հայրը ա-
նոր աղապուծ թաթիկները իր ձեռաց մէջ
առնելով կը տաքցնէր. խեղճ հայր,
կարծես կը վախնար թէ մի գուցէ վաւա-
կը իրմէ պիտի առնուէր:

«Ո՛հ ոգի», զոչեց Սքրուճ, անձկա-
նօք, «կ'աղաչեմ ըսէ՛ ինձի, փոքր Թիմը
ողջ պիտի մնա՞յ թէ ոչ?»

Ողին պատասխանեց «կրակարանին
մօտ պարսպ աթոռ մը կը տեսնեմ, եւ
անտէր անթացուպ մը, որ խնամքով կը
պահեն: Եթէ այս պատկերը ասանկ
մնայ, տղան պիտի մեռնի» (Շար.) (19)

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆՐԱՊ, 22 ՄԱՅԻՍ, 1930

ԹԻԻ 10

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՆ ՆԵՐԿԱՅ
ՎԻՃԱԿԸ ԵՒ ՀԱՅ ԱՒԵՏ. ՆԵՐԸ

Հայ Առաք. Եկեղեցին մեծ բաժին մը ունեցած է հայ կեանքը կերտելու, անոր ուղղութիւն մը տալու, անոր ապական պատրաստելու մէջ: Այսպէս եղած է անոր հաստատութեան առաջին օրէն սկսեալ, այսպէս է ներկայիս եւ այսպէս պէտք է ըլլայ ապագային՝ իբր վերացնող ազդակ մը: Ներկայիս Հայ իրականութեան մէջ չկայ հաստատութիւն մը որ այնքան մեծ կարեւորութիւն մը ունենայ աւերուած հայ կեանքը վերդարին շինելու մէջ որքան որ ունի Հայ Առաք. Եկեղեցին: Հայ կեանքին ներկան ու ապագան մեծ չափով մը կախում ունին Հայ Առաք. Եկեղեցիին ներքին իրական վիճակէն: Զօրացնել, բարձրացնել, բարեկարգել Հայ Եկեղեցին՝ կը նշանակէ զօրացնել, բարձրացնել եւ բարեկարգել նաեւ հայ կեանքը: Հայ Եկեղեցին տկարացնել կը նշանակէ հայ կեանքը վտանգի ենթարկել:

Հետեւաբար՝ մեծ հրճուածքով կը դիտենք տեղի ունեցող քաջալիրական շարժումները Մայր Եկեղեցիին մէջ: Պուսոյ «Սօսնակ»ը, Երուսաղէմի «Սիւն»ը, Գահրէի «Հրեղէն Սիւն»ը եւ Ֆրէզնոյի «Փարոս»ը կրօնական բաւական ճոխ գորականութիւն մը յառաջ բերին: Պէտք է մոռնալ Ղեւոնդ Եպս. Դուրեանի «Պարզ Քարոզներ»ը, պարզ եւ շինիչ, հոգեւոր գեղեցիկ ճշմարտութիւններով ճախացած մատենաշարը: Ասոնք բաւական լայն շրջանակներու մէջ հետաքրք-

րութիւն մը ստեղծեցին հոգեւոր նիւթերու մասին, մտքերը պատրաստեցին եկեղեցական բարեկարգութեան համար, ցուցնելու ջանալով Հայ Եկեղեցիին իրական վիճակը եւ գործածուելիք միջոցները: Այսօր Հայ Առաք. Եկեղեցին չէ ինչ որ էր առկէ տասը նոյնիսկ հինգ տարիներ առաջ. վերարթնութեան, կենսունակութեան նշաններ դիտող աչքերէն երբեք չեն վրիպիր:

Գրեթէ բան մը չենք գիտեր կովկասահայաստանի մէջ Հայ Առաք. Եկեղեցիին իսկական վիճակին մասին: Չենք գիտեր թէ ազատ Եկեղեցիի արմատական եւ շինիչ ըլլալէ աւելի կործանարար շարժումը եւ հակակրօն խիստ պայքարը որչափ վնասած են Հայ Առաք. Եկեղեցիին: Բայց Եկեղեցին տակաւին կանգուն է հոն, ժողովուրդին կրօնական ջիւղ մեռանդութիւնը մարած չէ երբեք: Ապագայ հոգեւոր վերարթնում մը թեւեւ յայտնէ թէ տակաւին որչափ կենսունակութիւն կը պահէ Հայաստանի քրիստոնեայ բնակչութիւնը: Գէորգ Ե. Սուրենեանցի մահը այս դառնալի կացութեան աւելի մթութիւն մը տուաւ սուգի մասնելով բոլոր Հայերը: Պուսոյ պատրիարքութիւնը կորսնցուցած է իր նախկին հմայքն ու կարեւորութիւնը՝ իբր ղեկավար կեդրոն մը Հայութեան մեծագոյն զանգուածին: Հայ ժողովուրդին ցրուիլը հեռու նոր հորիզոններու տակ նոր հարցերու եւ զժուարութիւններու առջեւ կը դնէ Առաք. Եկեղեցին, որ ներկայիս անկարող կզգայ ինքզինքը բոլոր դադութներու հոգեւոր պէտքերը հոգալու համար: Նոր սերունդին մէջ տեսնուող նիւթապաշտ եւ հակակրօնա-

կան խմորումները, որոնք նախապատե-
րապէս ծագում ունին, աւելի համար-
ձակ և աւելի վտանգաւոր երեւոյթ ա-
ռած են: Իսկ Դուրեանի մահը ան-
փոխարինելի կորուստ մըն է, մանաւանդ
այսպիսի ճգնաճամային մէկ պահուէն:

Աստուծոյ և նման երեւոյթներ, սակայն,
իրաւունք չեն տար մեզի յուստիս ըլ-
լալու Հայ Առաք. Եկեղեցիին ներկային
և ապագային մասին, որչա՛փ ալ վըշ-
տաւիթ և վտանգաւոր թուին անոնք:
Հայ ազգը՝ ընդհանրապէս և Հայ Առաք.
Եկեղեցիին մասնաւորապէս սուգի մէջ են
թէպէտ, վերջինս իր ժամանակը չ'ան-
ցներ իր վշտին մէջ մէկուսացած և ան-
շարժացած, այլ կորովի և շինիչ գոր-
ծունէութեան մը մղուած է: Գաղթա-
կան Հայութիւնը Սուրբ, Ֆրանսայի,
Եգիպտոսի, Ամերիկայի մէջ եկեղեցա-
կան նոր շէնքեր կը կառուցանէ իրր վա-
ռարանը իր ջերմ հաւատքին: Երուսա-
ղէմի ժառանգաւորացը, սկսած է Արմաշի
և Գէորգեան Ճեմարանի դերը կատարե-
լով՝ ուսեալ հոգեւոր մշակներ պատրաս-
տելով Հայութեան: Բարեկարգութեան
հարցը, վերջին մի քանի տարիներէ ի-
վեր խորհրդակցութեան, ուսումնասի-
րութեան, թեր ու գէ՛մ վիճարանութեան
նիւթ ըլլալէ վերջ, կը խոստանայ, թէ-
պէտ չափաւոր, — թերեւս առ աշտմ
լաւագոյնը այս է — բայց տոգոջ և շի-
նիչ պատուիր տալ:

Հայ Առաք. Եկեղեցիին մէջ երեւան
եկող, ըսենք, այս կրօնական վերաթի-
նութեան ըստ մեզի ամենաուշագրաւ
կէտն է մանուկներու և չափահասներու
կրօնական դաստիարակութեան համար
արուած կարեւորութիւնը: Եկեղեցա-
կան արարողութիւններն ու քարոզները
ժողովուրդին հասկնալի ընծայել, մա-
նաւանդ Ս. Գիրքը աշխարհաբար նոր
թարգմանութեամբ տարածել, ամէն Հա-
յուն առեւը գոյն դնել, այնպիսի փոր-
ձեր են որոնց բարեբար վերացեցիչ

ազդեցութիւնը Հայ բարոյականին վրայ
դիւրին է աշտմէն իսկ երեւակայել: Ման-
կանց Կիրակնօրեայ Դպրոցներու որդեգ-
րումը, թէպէտ ձեռվընոր, բայց նպատա-
կովը և էութեամբը նոր չէ Հայ Առաք.
Եկեղեցիին համար: Այն Եկեղեցին որ
կը հետաքրքրուի իր ժողովուրդին ներ-
կայ և ապագայ կեանքովը, և կ'ուզէ
անոնց բարոյականը կերտել, և նախան-
ձախնդիր է զանոնք իրեն հաւատարիմ
պահել գլխակցօրէն, պէտք է անպայման
հոգ տանի անոնց կրօնական դաստիա-
րակութեան, որուն ձեւը պէտք է յար-
մարի ժամանակի պահանջներուն, օգ-
տագործելով գլխութեան ընծայած բո-
լոր դիւրութիւնները: Հայ Եկեղեցին
պայծառ և զօրաւոր պահելու համար
ասկէ աւելի յարմար, ազգու միջոց չի
կրնար ըլլալ քան Կիրակնօրեայ Դպրոցը,
զոր որդեգրելու ողջամտութիւնը ունե-
ցաւ Հայ Եկեղեցին պաշտօնապէս: Եւ
մանաւանդ այս մասին յարուցուած ան-
հարկի անարժէք վիճուքը առանց երբեք
ընկրկում մը յառաջացնելու եկեղեցա-
կան վերին իշխանութեան մեջ, պատճառ
եղաւ որ Հայ Եկեղեցին պաշտօնապէս և
կորովի կերպով հռչակէ Կիրակնօրեայ
Դպրոցի իր կողմանէ որդեգրումը: Ա-
ստուծոյ այնպիսի քայլեր են, որոնց արժէքը
թերեւս հիմա կատարելապէս չենք կրնար
կշռել: Վերջապէս իբր քաջաշէնական
իրականութիւն մը պէտք չիլի Կիլիկիոյ
Կաթողիկոսութեան վերահաստատման
յաջող ջանքերը, ընծայարանի մը բաց-
ման բարեկաջող կարգադրութիւնը:

Այս բոլոր ջանքերը, միմիջարկան
երեւոյթները ուրախութեամբ կը գի-
տենք, քանզի համոզուած ենք որ
այս թշուառ ազգին մեծագոյն ապուէ-
նը, յենարանը, ներկան ու ապագան ա-
պահովող ամենակարող ազգակը՝ զօրա-
ւոր, իր հոգեւոր կոչումին գլխակից և
հաւատարիմ կերպով գործող Հայ. Ա-
(Շատուխախքիւնը 864-ից եղի վրայ)

ՅՕԴՈՒԱՇՆԵՐ

ՏԵՐԸ ԻՄ ՀՈՎԻԻՍ Է (սաղ. 23. 1)

Քարոզ Վեր. Մ. Փափաղեանի, խօսուած Պէյրուքի Հայ Աւետ. Ա. Եկեղեցիին մէջ, Կիրակի առաւել, Ապրիլ 27ին:

Հեռահանգոյն կանգնող սաղմոսներ կան, որոնցմէ մէկն է 53րդը, որուն բառերով երբայական ու քրիստոնէական մեղաւորը խոստովանած է իր մեղքերը: Մէկ երկրորդն է 80րդը, որ երկրպագութեան աղօթքն է. այս բառը շատ կը սիրեմ, որ կը նշանակէ խոնարհիլ եւ հոգը համբուրել: 103րդ սաղմոսը Գողթնաբանութեան աղօթքն է: Աստուած բարեբար մենք բարեբարեալ, Աստուած երախտաւոր մենք երախտապարտ, Աստուած աղբիւր՝ մենք ընդունող: Մենք պէտք է մօտենանք եւ գոհալիւն տանք Անոր: 139րդ սաղմոսը անձնաբանութեան աղօթքն է: Կ'արժէ որ մարդ կանգ առնէ եւ իր սիրտը գննէ Աստուծոյ աչքերով. անախորժ բան է հեռադիտակով դիտել ուրիշները եւ հազիւ նայիլ մեր ներսիդին, ուսկէ կը ծագին անախորժ շատ բաներ: Այս տեսակ սաղմոսներէն մէկն է 23րդը, որ ամէնէն գեղեցիկն է եւ ամէնէն պարզը, իր գեղեցկութեան մէջ պարզութիւն կայ, եւ պարզութեան մէջ՝ գեղեցկութիւն: Այնքա՛ն պարզ, որ մանուկ մ'իսկ կրնայ գայն հասկնալ:

Կրնա՞ն պատկերացոյցի մշտնջենական լեռնէն ծագում տանող աղբիւրը, որ իբրեւ կոյս, իբրեւ հարս ի յայտ կուգայ: Կրնա՞ն Կրէնտ Քէնեքնի (Մ. Նահանգաց մէջ) տեսարանը նկարագրել, որ վսեմ ըմբռնումը քեզի կը ներշնչէ: Մայրամուտ արեւին նկարագրութիւնը կարելի՞ է: Թերեւս ասոնք կարելի ըլլան. բայց այս աղօթքը (Ի. Սաղմոս) նկարագրել անկարելի է:

Զեմ գիտելի երբ պիտի գայ այն տառնը երբ մարդիկ խոստովանութեան ա-

ղօթք պիտի չընեն, անոնք պիտի չըսեն, «Տէ՛ր, ներէ յնձի»: Ի. Սաղմոսին մէջ խոստովանութիւն չկայ: Երբեք տրտուշիկ զգացումը մեր լեզուին կուգայ. կ'զգաս որ անիրաւեալ ես: Երեւութապէս աղօթք եղող սաղմոսներ կան, որոնք իրականին մէջ անէծքներ են, գորոնք քրիստոնեայ մը չի կրնար խօսիլ: այս սաղմոսին մէջ զանգաց չկայ: Կան սաղմոսներ որոնք ազանքներ կը պարունակեն. այս սաղմոսին մէջ աղաչանք չկայ, գայն խօսողը Աստուծոյ բան մը չ'ուզել: Երբեք աղօթքը նոր իրման ձեւ կ'առնէ, որով մարդը կ'ուզէ Աստուծոյ առջեւ իր ուխտը նորոգել: 23րդ սաղմոսին մէջ նուիրեալ մաս չկայ: Բարեխօսութեան աղօթք ալ կայ: Յիսուս իր գազաթնակէտին հասաւ երբ վերջին գիշերը իր բարեխօսական աղօթքը ըրաւ, որուն շնորհիւ մենք կ'ապրինք: Քրիստոնեան ես իր բարձրագոյն կէտը կը հասնի, երբ իր ուղիղութիւնը ուրիշներուն կը դարձնէ: Ի. Սաղմոսին մէջ քաղցրութիւն ալ չկայ: Ի. Սաղմոսը անգործակալն է: «Տէրը իմ հովիւն է:» Գանգատ չունիմ, կարօտութիւն չունիմ, խոստովանութիւն չունիմ: Ես եւս առաւել յաջած եմ:

Մենք երբեք թշնամիներ կ'ունենանք. երբեք ալ մեր բաժինը ուրախութեան մէջ կ'ըլլայ. անողջ մարմին եւ խաղաղ կեանք կ'ունենանք. ընտանիքի մէջ ամէն բան ունիս քեզ երանաւէտ ընելու, հանգիստ ես: Ահա տուն մը ուր Աստուծոյ ձեռքը խաչածեւ չէ լինած, թերեւս օր մը իյնայ: Ասոնց վրայ բան մը չ'ըսելի Ի. Սաղմոսը: Բայց ես ասոնց վրայ չեմ խորհիր:

Ի՞նչ կոչենք այս Ի. Սաղմոսը: Գողթնաբանութեան սաղմոսն է կը տարբերի, խոստովանութեան սաղմոսն է կը տարբերի, մեր բոլոր յիշած սաղմոսներէն կը տարբերի ան: Այս սաղմոսը երգողը գտած է զԱստուած եւ գտած է յազուրդ:

Քրիստոսն մէկ երկու գար առաջ ա-

մենամեծ դէմքերէն մէկը ապրեցաւ չնդկաստանի մէջ: Ասոր և Քրիստոսի միջև զուգահեռական զիծեր կան: Պուտտան է այս: Ասոր մէջ ներքին գոհունակութեան նման բան մը կայ. սպաննել, բաղձանքը, մեռցնել ետը, փախչիլ էութենէ, խոյս տալ զոյութենէ, ոչնչացնել անձնաւորութիւնը և անձնականութիւնը, ոչինչ ըլլալ որպէսզի հանգարտի սիրտը: Ի՞նչ սաղմոսը ասոր ճիշդ հակառակն է: Ոչ թէ աղքատութիւնը, այլ ճոխութիւնը երանութիւն է. այդ քանը ի՞նչ քան չե՛ք այդ եակ մը, որ է հիմը և կեդրոնը տիեզերքի, և որ մէն մի հիւլէի գոյութիւնը կը պահէ:

Գիտութիւնը չ'ըսեր թէ Աստուած չըկայ. բայց չ'ըսեր բան մը անոր անձնաւորութեան մասին:

Զգիտականութիւնը (ակնօթ իսրիզմ) կ'ըսէ. «Աստուած անձանօթ է», չէ թէ «չկայ»: Բայց հաւատացեալը կ'ըսէ. «Աստուած ճանաչելի անձ է»:

Դուն չես կրնար պատկերացնել հոգիւնի գրկին մէջ եղող զատնուկը, նմանապէս զուն չես կրնար երեւակայել մօր մը գրկին մէջ եղող մանուկը և անոր սրտին զգացումը, որ հանգարտութիւն է, յագուրդ է: Պէպէքը ըսել կ'ուզէ. «Պատկեր, չաքար կամ ուրիշ բան չեմ ուզեր այլ քու բազուկներուդ սեղմումը»: Ահա այս է զգացումը, զոր սաղմոսերգուն կ'ուզէ յայտնել երբ կ'ըսէ. «Տէրը իմ հովիւս է»:

Օգոստինոս իր «Խոստովանութիւնք» անուն գրքին մէջ ըսաւ ոսկեզօծ խօսք մը. «Մեր սրտերը պիտի չհանգչին մինչև որ չհանգչին Բու (Աստուծոյ) մէջդ»: Մեր պէտքը մէկ բան է. հազար բանի պէտք չունինք: Ինչպէս որ մանուկը միայն իր մօրը պէտք ունի, մենք ալ Աստուծոյ պէտք ունինք: Դուն ընդունիս կամ չընդունիս, ուրանաս կամ ինչ տղանիս ասիկա իրական է. չես կրնար հանգիստ ըլլալ, մինչև որ չգտնես զԱյն:

Մարդը հացով միայն չ'ապրիր, այլ նաև Աստուծոյ խօսքով: Մայրը գտնողը կ'աթնալ գտած կ'ըլլայ:

Աստուած ամէն վայրկեան կը նորոգէ իր տիեզերքը եւ մարդուն հոգին. մարդ յաճախ իմաստութիւնը չունի այս տեսնելու: Բայց երբ ունենայ այս իմաստութիւնը, որ վերէն է, կը գտնէ զԱյն, կ'ըլլայ at home with God, Աստուած բնակարան կ'ըլլայ որ ես կ'ապրիմ: «Տէրը իմ հովիւս է»:

Պատկեր թէ իրականութիւն, թէ ոչ երեւակայութիւն է այս: Տկար և պարզ կերպով խօսեցայ. ասիկա քրիստոնէական փորձառութիւնն է, զոր տկար բառերով աշխատեցայ յայտնել: Այս փորձառութեան մասին կը խօսի Փիլիպեացոյ թուղթը, զոր կրնանք գոհունակութեան թուղթը կոչել, եւ որուն վրոյն, սակայն, բանտն է:

Ս. Գրքի մէջ երկու համարներ կան, որոնց մասին չեմ համարձակիր խօսելու: Նոր կտակարանի մէջ կը գտնուի մէկը, զոր Յիսուս խաչին վրայ արտասանեց: Ֆրէզնոյի եկեղեցիներուն կողմանէ ընդունուած սովորութեան մը համեմատ ամէն տարի Աւագ Ուրբաթ օրը քարոզիչները կարգաւ կը խօսին, նիւթ ունենալով խաչին վրայ Յիսուսի խօսած հօթը խօսքերէն մէկը: Տարի մը, երբ կարգը իմա էր, ինծի առաջարկեցին խօսիլ, «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ գիտ թողուցիր», խօսքին վրայ: Զընդունեցի այս առաջարկը, ըսելով որ ինքզինքս անկարող կը զգամ այս համարին վրայ խօսելու: Քրիստոս՝ որ կրնար առանց հացի ապրիլ, բայց ոչ՝ առանց Աստուծոյ, խաչին վրայ այս խօսքը արտասանած պահուն կ'ունենայ զիտակցութիւն մը, զոր հաւատա՛, չեմ գիտեր, չեմ հասկնար թէ ի՞նչ կը նշանակէ: Իսկ երկրորդ համարը կը գտնուի Հին կտակարանի մէջ: Զեմ կրնար նոյնպէս խօսիլ թէ ի՞նչ կ'ըսէ

սաղմոսերգուն երբ կ'երգէ. «Տէրը իմ հովիւս է, բանի մը կարօտութիւն պիտի չունենամ:» Ես հիմա չքարոզեցի ասոր վրայ, այլ մենախօսեցի սրտիս հետ, քանզի շատ խորունկ փորձառութիւն մ'է այս:

* *

Յիսուն վայրկեան տեւող այս քարոզը, որուն նեղնչող, վերացնող ազդեցութեան տակ պապական ճողինները յազուրդ կը գտնէին, որուն ուժգնութիւնն ու գե-

ղեցկութիւնը անկարելի է այս կարճ կերպով նօթագրուած ամփոփումին մէջ ցուցնել, վերջացաւ անոր քարոզչին սա կարճազօթ քովը. «Մեր դուրձը լմնցուցինք, պիտենք թէ թերի է ան. և լաւ որ թերի է: Կը խնդրենք որ հիմա սկսիս Դուն զործիդ: Շատ բառեր գործածեցինք, որոնցմէ անոնք որ քու կամքիդ համեմատ չեն դուրս առ, իսկ անոնք որ Քուկդ են բեղմնաւորէ: Քու փառքիդ համար, Ամէն:

ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐԿ ԴՈՒՐԵԱՆԻ

Քո՛ւ յիշատակիդ, ողբացեալ
Վարպե՛տ, քո՛ւ անդաստանէդ
(հետեւողութեամբ)

Ոչ շըշունչ մը կար, ոչ ալ բառ
Վանքին մէջը Սաղէմի,
Չըկար ժըպիտ, ճակատ պայծառ
Հոն մահ շըշէր ամենի:

Երբեք բըժիշկ մը տիրական
Յայտնէր յոյս մը հիւանդին,
Կեանքը պետին միւր սիրական
Հոսկ կը շիշէր պլպլագին:

Մութ կամարին տակ վեհափառ
Դահլիճին խորն հարաւի,
Անբիծ ճակատ մը հոգեվար
Չուէր սուտէն յիրաւի:

Այս էր կեանքը մեծ հովիւին
Հիւսիսի և հարաւի,
Կարճ չէ՞ր օրերն վեհ արծուին
Սլացումի ծարաւի:

—Տե՛ս, արդեօք կա՞յ անհատ, կղեր,
Որ հետեւի քու շաւղին,
Անկեղծ շեշտովդ յար անվեհեր
Առաջնորդէ մեր ուղին:

Դու երկնեցիւր կամ երգեցիւր
Երգը վըսեմ սիրողի,
Սակայն երբե՛ք չը կեղծեցիւր
Մինչեւ դուռը սեւ հողի:

Ազգը պահէ պահ կանչեց քեզ
Հարաւի կամ հիւսիսի,
Հոգիդ՝ ծաղրեց փառքը, երգեց՝
«Կեանքը մանուկ Յիսուսի:»

Իղձըդ, գործըդ, կեանքըդ համայն
 Խաղաղութիւն երկնեցին,
 Մէկը չեղաւ անհամաձայն
 Քու անձիդ դէմ երկնածին:
 Թրթռուն քննար մը ոսկեկար
 Քու «Սրինգըդ Հովուական»,
 Պիտի ապրի անմեռ, անմար
 Թորդ նեկտարովդ մեղուական:
 —Ինչո՞ւ, ո՞վ Տէր, դեռ վաղաժամ
 Զայն մեր ծոցէն խըլեցիր,
 Քեզ կանչեցիր, միշտ սիրահամ
 Տիպար կըղերն ԱՆԲԱՍԻՐ:
 Տակաւին մենք, կ'ըզձայինք, Տէ՛ր,
 «Այբ, Բէն, Դիմէն դառ» առնել,
 Տակաւին մենք, կ'ուզէինք, Տէ՛ր
 Իր հոգիէն կայծ առնել:

* *

Զիզ մը զգաց, զիզ չափազանց,
 Հայերուն Աստուած,
 Եւ խոտաղաւ, խօսք անմոռաց,
 Մեզ զըրկել անգարձ,
 Զոյգ եղիչէներ, ուղեղով յուրթի,
 Ուր Իր սէրն յորդի:
 Հալեալ ՌՇՏՈՒՆԻ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ ԵՒ ԸՆԿ. ՀԱՐՑԵՐ

ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԴՊՐՈՑ (3)

1. Յիսուս իբր ուսանող

Ա. Իբր կատարեալ մարդ իմացա-
 կան կարողութիւններ ունէր Յիսուս,
 որուն մասին կը կարդանք թէ ֆիլիքա-
 պէս, մոսաւորապէս, բարոյապէս եւ կը-
 բօնապէս կը զարգանար (Ղուկ. 2. 51-2):

Բ. Յիսուս օժտուած էր բնական
 խորատես իմացականութեամբ մը: Ղուկ.
 2. 46:

Գ. Յիսուսի գալոցական կեանքի
 շրջանը շատ կարճ եղած է եւ բարձր ու-
 սում մը առած չէ. առաքաւելն իր ժա-
 մանակին սովորութեան համեմատ մին-
 չեւ 12 տարիքը նազարէթի մէջ Սինա-
 կոկի վարժարանը յաճախած է, իրողու-
 թիւն մը զոր կը հաստատէ Հրեայ վար-

դպեաներու քննադատութիւնը (Յովհ.
 7. 15, 49):

Դ. Այսու հանգերձ իր մասնաւոր ու-
 սումնասիրութիւնովը, ուշադիր զիտո-
 ղութեամբը եւ ամէն դասակարգէ մար-
 դերու հետ ունեցած շփումովը շատ ի-
 մաստութեան կրցած էր տիրանալ:

Ե. Հետեւաբար, զիտական բացատ-
 րութեամբ կ'ըսենք թէ Յիսուս «ինքնա-
 կերտ» անձնաւորութիւն մ'էր:

2. Յիսուս իբր ուսուցիչ

Ա. Յիսուս ինքը, իր բարեկամներն
 ու թշնամիները զինքը իբր ուսուցիչ կը
 ճանչնային (Յովհ. 3. 2): Այն բառը որ
 Աւետարաններու մէջ յաճախ «Տէր» կը
 թարգմանուի բնազդին մէջ «վարդա-
 պետ» է:

Բ. Յիսուսի հետևորդներն ալ աշա-
 կերտներ այսինքն ուսանողներ կոչուած

են: Յիսուս իր աշակերտներուն ուղղած վերջին խօսքով հրամայեց բոլոր ազգերը աշակերտել (Մատթ. 28. 19):

Գ. Առաջին քրիստոնեաները շատ կարևորութիւն տուած են ուսումի եւ ուսուցանելու, իսկ գրեթէ զանց ըրած են արարողութիւնները:

Յ. Յիսուսի Ուսուցման Նիւթը

Նոր Կտակարանի մասնաւոր յատկանիշն է կրօնքը, զոր Յիսուս երկու ձեռով վարդապետեց: Ա. Մարգինչեօր պէտք է գիտնայ Աստուծոյ մասին. ասիկա աստուածաբանութիւն է: Բ. Աստուած ինչպիսի պարտականութիւններ կը պահանջէ մարդէն. ասիկա բարոյագիտութիւն է:

Աւետարանի հեղինակները բարձր գիտական ծանօթութիւն մը չեն պահանջեր ասոնցմէ զատ ուրիշ բոլոր նիւթերու մասին (Մարկ. 13. 32, Գործք. 1. 7):

Ս. Գրքի մէջ կարգ մը գիտութեանց մասին տեսնուած ակնարկումները գիտական վճիռներ չեն: Երկրաբանական, աստեղագիտական, կենսաբանական, պատմական, իմաստասիրական, հոգեբանական նիւթերը գիտականօրէն պէտք է ուսումնասիրուին:

4. Յիսուսի Ուսուցման Նշանակիչը

Յիսուսի նպատակն է մարդկային միտքը ամէն սխալներէ ազատել կրօնական, ընկերային կամ քաղաքական մարդկութեւ մէջ (Յովհ. 8. 32, 36): Տգիտութիւնը կ'արգիլէ ճշմարիտ յառաջդիմութիւնը: Նոյնիսկ կրօնական գաղափարները աւելորդապաշտական ըմբռնումներու կը յանգին եթէ ուսեալ մեղքով մը անոնք չեն առաջնորդուիր:

Եկեղեցին կրթական գործը շարունակեց: Ընդհանուր պատմութիւնը, քաղաքակրթական եւ եկեղեցական պատմութիւնը եւ գրականութիւնը կը ջուլանեն թէ եկեղեցին ամէն կերպով կըրթութեան առաջնորդը եղած է. անիկա յունահռոմէական գրականութիւնը

պահեց, զպրոցը, արհեստն ու արուեստը, իմաստասիրութիւնն ու գրականութիւնը վերակենդանացուց:

Յիսուս, իր առաքեալները, եւ եկեղեցիի առաջնորդները կրթութիւնն ու լուսաւորութիւնը քաջալերեցին: Անոնք լաւ ըմբռնեցին կրթութեան նշանակութիւնը եւ անհատներու եւ ժողովուրդներու համար անհրաժեշտ նկատեցին զայն. որովհետեւ՝ Ա) սուրբ պարտականութիւն մըն է մարդուն մէջ գտնուող բոլոր ընդունակութիւնները զարգացնել: Հոգեբանները կ'ըսեն թէ միջակ կրթութիւն ստացած ուղեղ մը հազիւ կրնայ իր ոյժին մէկ երրորդը գործածել: Ասոր մի զարմանաք, քանզի ուղեղն ալ մարմնին միւս անդամներուն նման կը ծուլանայ, կը կարծրանայ, եւ անպէտ կը դառնայ եթէ չգործածուի: Բ) Ողջամիտ դատողութիւնն ու յառաջդիմութիւնը անկարելի են, եթէ ճշմարիտ գիտութիւն չըլլայ: Մարդիկ եթէ ճշմարիտ ծանօթութեան տիրանան ողջամիտ ընթացքի ալ կը հետեւին:

Աշխարհիս մէջ քաղաքական, տնտեսական եւ կրօնական ինկածութիւնը բարոյական տկարութենէն աւելի տգիտութեան արգիւնք է: Վիքտոր Հիւկօ ըսած է. «Քանզի տգիտութեան բոյնը, քանզի կ'ըլլաս ոճիրի օճախը»: Տգիտութիւնը թշնամի է ազատութեան, յառաջդիմութեան, եւ այն բոլոր բաներուն որոնք երջանիկ կ'ընեն մարդը: Տգիտութիւնը մայրն է բոլոր աւելորդապաշտութեանց, աղքատութեան, գերութեան, անկրօնութեան եւ ամէն չարեաց, որոնք իրենց կարգին կը ծնին պատերազմը, իշխող եւ բաւազրկող դասակարգը եւ բռնատիրութիւնը:

Գ. Կրթութիւնը կարեւոր տեղ մը կը դրուէ ապագայի վերաբերեալ հարցերուն եւ վաղուայ սերունդին կեանքին մէջ:

Եթէ կ'ուզենք ապագայ երկու սե-

բունդներու մէջ ընկերային հարցերը չիտակ կերպով լուծել՝ պէտք ենք աւելի կարեւորութիւն տալ ընկերային դաստիարակութեան մեր Կիրականօրեայ և միջշաբթուայ դպրոցներուն մէջ:

Մօտերս նշանաւոր բեմբասաց մը այսպէս ըսած է. «Մեր մանուկներուն մինչ բարձրագոյնութեան ցոյցակը կը սորվեցնենք՝ պէտք է անոնց բայատրենք թէ ի՛նչ է «երկու անգամ երկու չորս կ'ընէ»-ի յարաբերութիւնը ընկերային կեանքի հետ»:

Դ. Անցեալի և ներկայի մեծագոյն բարենորոգումները մեծ բանականութեամբ, ազակալից ցոյցներու, արդարութեան և ազգերու անունով կատարուող պատերազմներու միջոցաւ չեն կատարուած, այլ Աստուծոյ Թագաւորութեան սկզբունքներուն տեսական ուսուցումովն ու ազդեցութեամբը, այսինքն անոնք՝ սիրոյ, ծառայութեան և զոհողութեան ոգիով յառաջ եկան:

Մեծ Պատերազմէն վերջ տեսնուող կարգ մը լաւ բաները պատերազմի արդիւնքը չեն, ինչպէս որ ոմանք կը պնդեն: Անոնք լաւ մարդերու կողմանէ պատերազմէ առաջ մտածուած և պատերազմէ վերջ գործադրուած են: Յիսուս իր աշակերտին ըսաւ. «Սուրբ պատեանը գիր:» Նորէն կը կարդանք. «Ոյժով կամ զօրութեամբ չէ, այլ իմ հոգիովս»: Մեծ յաղթանակները միշտ մեղմ ձայնով երւան եկած են:

Ճշմարիտ կրթութիւնը պէտք է մարդը ազատէ մտքի կապանքներէն և սխալներէն: Գաղափարի ազատութիւնը կարգ մը տեսութիւններ չէ, այլ հոգեկան վիճակ մը որ կը յարգէ զԱստուած, ճշմարտութիւնը և իր ընկեր արարածները:

Արդար ըլլալու համար պէտք է ըսենք որ շատերուն նոյնիոյ շատ խելացի մարդերուն վարդապետութեանց մէկ մեծ մասը միտքը վերացնող տեսակէն չեն, կը պատմեն թէ Միացեալ Նա-

հանգաց հասարակ ժողովուրդը, շատ ստորին տեսակէ գրականութիւն մը կը կարգան, ստորին տեսակէ շարժանկարներու, թատրոններու, երաժշտական հանդէսներու կը յաճախեն: Ասոր իբր հետեանքը անոնք մտաւորապէս տկար, գործունէութեան մէջ վախկոտ և խորհելու անկարող կ'ըլլան:

Կրթութիւնը աւելի քրիստոնէացուցիչ տեսակէն պէտք է ըլլայ: Ասիկա չի նշանակեր թէ նեղմիտ, խմբակցամոլ, նոր ըմբռնումներու հակառակորդ պէտք է ըլլալ, այլ ըսել կ'ուզենք թէ պէտք է աւելի առիթ տրուի քրիստոնէութեան յառաջգլխութեան համար, պէտք է աւելի բարեացակամ ոգի ցոյց տրուի Ս. Գրքին հանդէպ:

Մարդ կրօնքի շարժիչ ոյժին կը կարօտի բարձր գաղափարական մը համեմատ ապրիլ կարենալու համար: Յաւալի իրականութիւն մ'է որ մեր ներկայ կրթական միջոցները բարոյապէս փրտտելու վտանգին մէջ կը գտնուին:

Մարդ՝ Աստուծոյ, հաւատքի, սիրոյ, արդարութեան, գութի և անմահութեան մասին իր հետաքրքրութիւնն ուսէրը չի կորսնցնիր, քանի կը պահէ լաւ պայմաններու տակ իր ժառանգած բարոյական զգացումները:

Բոլոր գիտութիւնները, ուսողութիւնն ու կենսաբանութիւնը, աստիճանագրութիւնն ու փիլիսոփայութիւնը, պատմութիւնն ու զրականութիւնը, կրնան դասաւանդուիլ առանց Ս. Գրքին գէմ յարձակելու. երբեք պէտք մը չկայ աշակերտին հաւատքը սարսելու:

Ուստի «կրթութիւնը պէտք է այն տեսակէն ըլլայ որ քրիստոնէայ ընէ», ըսելով կ'ուզենք հասկննել թէ բոլոր կրթութիւն ազգականները—գարոյց, մամուլ, դրականութիւն, եյլն—պէտք են հաստատուել սիրոյ, ծառայութեան և զոհողութեան սկզբունքներուն վրայ:

Զահլե (Շար.) ՅԿ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ԽԱՀԱԹԽԱ ԿԱՆՏԻ (2)

1914ին Կանտի Հնդկաստան վերադարձաւ առաջնորդի մը վարկը (փրէսթ) շահած ըլլալով։ Այս տարիներու ընթացքին, Հնդկներու սրտին մէջ արթնցած էր անկախութեան տենջը եւ կազմակերպուած էր Ազգ. Հնդկական Գոնկրէսը։ Գոնկրէսի անդամներուն մէջ երկու միտք կը տիրէր։ Ոմանք կ'ուզէին Անգլիական իշխանութիւնը բոլորովին վտարել երկրէն, ուրիշներ պատրաստ էին գործակցիլ Անգլիոյ հետ։ Մինչեւ 1921, Կանտի համախոհ էր վերջիններուն։ Ան Անգլիոյ կայսրութեան մի հաւատարիմ անդամն էր։ Մեծ պատերազմին, Կանտի իր հեղինակութիւնը զրաւ ի սպաս Անգլիոյ, զստահելով այն ազատական խոստումներուն, որ Անգլիա ըրաւ պատերազմի ընթացքին։ Պատերազմին Հնդկաստան հայթայթեց 895,000 զինուորներ եւ նւթական ահեղ զոհողութիւններ ըրաւ, յուսալով թէ իր բազմացեալ վարձատրութիւնը պիտի ստանայ Զինադադարէն յետոյ։

Զինադադարէն վերջ Հնդկաստան հիասթափուեցաւ։ Վառնդը վերջացած էր։ Եւ Անգլիա փոխանակ իր խոստացած ազատութիւնը տալու, անոնց արդէն ունեցած ազատութիւնն ալ սահմանափակեց։ Եւ հնդկներուն հետ մեծագոյն խտրութեամբ սկսաւ վարուիլ։ Բոլոր Հնդկաստանի մէջ ցամառներ (ինտիկէյշն) պռթկում մը տեղի ունեցաւ։ Ապստամբութիւնը սկսաւ։ Եւ Կանտի եղաւ անոր առաջնորդը։

Ցարդ Կանտի հետաքրքրուած էր միայն ընկերային բարեկարգութիւններով։ Մինչեւ 1919, Կանտի գործօն դեր առած չէր ազգայնական շարժումին մէջ։ Սակայն Թիլաք անուն մեծ ու կարող ազգայնական առաջնորդը 1920ին յանկարծ մեռաւ։ Եւ իրեն արժանի ուրիշ յաջորդ մը չունեցաւ, ու ազգին առաջ-

նորդելու պարտականութիւնը Կանտի ուսերուն վրայ դրուեցաւ, հակառակ իր կամքին ու փափաքին։ Կանտի կ'ըզգար թէ իր պաշտօնը հոգեւոր է եւ ոչ թէ քաղաքական, բայց իր բարոյական ազդեցութիւնը այնքան մեծ էր, որ երկրին քաղաքական առաջնորդութիւնն ալ իրեն յանձնուեցաւ։ Յաջորդ տարիներուն՝ Կանտի իր ազդակիցներուն վրայ ունեցաւ գրեթէ անքաթորական հիղինակութիւն։ Ժողովուրդը իր վրայ կը նայէր իբր թէ սուրբի մը վրայ, եւ ոմանք զայն իսկապէս աստուածացուցին։ Ժողովուրդը իր խօսքերը կընդունէր իբր Աստուածային պատգամ։ Իր բոլոր հրահանգներուն եւ հրամաններուն կը հնազանդէին մանկական համակերպութեամբ։ Նա եղաւ Հնդկի քաղաքականութեան (փալիսի) անվիճելի պետը։ Համա-Հնդկական Ազգային Գոնկրէսը իրեն ընծայեց բաժարձակ իշխանութիւն եւ իրեն թելադրեց որ իր յաջորդն ալ ինք անուանէ։ Կանտի կրնար սկսիլ քաղաքական յեղափոխութիւն մը, եթէ ուզէր։

Սակայն Կանտի բառին իրական առումով, քաղաքագէտ (փալիթիշըն) մը չէ։ Անիկա այնքան մեծ եւ ղեկողի անձ մըն է, որ չի կրնար ազգայնամուլ մը ըլլալ։ Անիկա աշխարհաքաղաքացի մըն է։ Անիկա կը սիրէ համայն մարդկութիւնը։ Նա կ'ըսէ. «Իմ կրօնքս աշխարհադրական սահմաններ չունի... Իմ հայրենասիրութիւնս ստորագաս է իմ կրօնքին»։ Անիկա չի կրնար հետեւիլ «Մայ քընքի բայք օր րօնկ» քաղաքականութեան։ Անոր համար ճշմարտութիւնը եւ սկզբունքը գերիվեր է քան ազգային շահերը։

Ուստի Կանտի նկատուեցաւ քաղաքական ասպարէզին մէջ ոչ թէ իբր քաղաքագէտ, այլ իբր բարեպաշտ եւ բարեկարգիչ։ Անիկա բնութեամբ կրօնասէր է, անոր բոլոր շարժումները կրօնական

համոզումներէ կուգան: Անոր քաղաքական շարժումներն ալ հաստատուած են կրօնական սկզբունքներու վրայ: Անիկա էապէս կրօնատէր է, ստիպմամբ քաղաքական առաջնորդ: Պարագաները զինք մղեցին ազգային նաւը ղեկավարել փոթորիկի մէջէն եւ իր դաւանանքին գործնական քաղաքական արտայայտութիւն տալ: Կանտի տեսութեւնը Զնդկաստանը կը գտնուի յեղափոխութեան մը առջեւ: Եւ իր օփին մէջ առաւ իր ազգին ղեկը, որպէսզի իր ազգակիցները ետ կեցնէ բռնութիւնէ: Կանտի մարդկային պատմութեան մէջ նոր եւ զարմանահրաշ երեւոյթ մը մէջտեղ գրաւ. այսինքն ազգային յեղափոխութիւն մը զլուխ հանել առանց բիրտ ուժի, գէնքի, բռնութեան գործադրութեան:

Կանտի երբեք չի հաւատար բռնութեան: Ան կը խորշի բիրտ ուժէն, ինչպէս կը խորշի խժէն: Ան կը հաւատայ թէ իր դատին արդարութիւնը կը կորսուի, երբ բռնութիւն կը բանեցուի: Նա իր ձեռքին մէջ գէնք չունի, նա ամբոխէն կը խորշի: Ամբոխի խառնական, բռնկող, փոթորկող, անոսանձելի յուզումներէն եւ պոռթկումներէն կը կը վախնայ: Նա կը պահանջէ ինքնօրինութիւն Զնդկաստանի համար: Սակայն կը հաւատայ թէ՝ Զնդկաստանը բռնութեամբ չի կրնար ազատ ըլլալ: Զնդկաստանը ազատ ընելիք միակ գէնքը աէրն ու ճշմարտութիւնն է: «Կատարեալ սիրոյ օրէնքն է իմ էութեանս օրէնքը» կը գրէ նա:

Եւ նա քաղաքական ասպարէզին մէջ ալ կը կիրարկէ սիրոյ օրէնք: Իր հայրենիքը կուգէ փրկել սիրոյ քաղաքականութեամբ: Այս նպատակին հասնելու համար նա կը զիմէ լռիկ ու անգէն ընդգիմութեան: Սակայն անոր ընդգիմութիւնը երբեք կրաւորական (փէսիվ) չէ, հապա գերադրապէս ներգործական: Ան

վախնալու համար չէ որ խուսափած է բռնի միջոցների, ընդհակառակը, բացարձակօրէն անվախ ըլլալուն համար կը խուսափի բռնութենէ: Նա կը վախնայ ոչ նեղութենէն, ոչ հալածանքէն, ոչ բանտարկութենէն, ոչ մահէն: Նա համոզուած է թէ բարոյական ընդգիմութիւնը մեծագոյն քաջութիւն եւ անձնութեան իրաւունքն է: Նա կը գրէ. «Ես կը նախընտրեմ որ Զնդկաստան գէնքի զիմէ իր պատիւը պաշտպանելու համար, քան երկչոտութեամբ իր անպատուութեան գոհը մնայ. սակայն, ես կը հաւատամ թէ ոչ—բռնութիւնը (նրն վայելէն)» անհունապէս գերադաս է բռնութեան. ներդրութիւնը աւելի այրական է քան պատժումը:

«Ներդրութիւնը զինուոր մը կը վարդարէ: Այն անիմաստ է երբ անկարող էակէ մը կ'արձակուի...: Զօրութիւնը մարմնաւոր էակէ մը չի վար: Այն կուգայ աննուաճելի կամքէ մը: Ոչ-բռնութիւնը չի նշանակել խոնարհ հպատակութիւն չարագործի կամքին, հապա մէկու մը ամբողջ հողին դնել բռնակալի կամքին դէմ: Այս օրէնքին համեմատ շարժելով, առանձին անհատ մը կրնայ զիմարել անիրաւ կայսրութեան մը ամբողջ գործութեան»: Սակայն այս կը նշանակէ տառապանք (սըֆըրինկ) եւ անձնագոհութիւն: Կանտի տառապանքի պատգամաբերն է: Անիկա իր կեանքին մէջ կը մարմնացնէ տառապանքը եւ իր ազգակիցներն ալ կը հրաւիրէ տառապանքի, ճգնումի, անձնագոհութեան, նեղուածի դառն ու տաժանելի ճամբուն: Նա կըսէ. «Տառապանքը մարդկային ցեղի զրոյշմն է: Այն յաւիտենական օրէնք մ'է: Մայրը կը տառապի որպէսզի իր զաւակը ապրի: Կեանքը կը ծնի մահէն...: Ոչ մէկ երկիր երբեք բարձրացած է առանց մաքրուելու տառապանքի կրակով: Յառաջդիմութիւնը պէտք է չափուի կրուած տառապանքի

քանակով: ... Որքան մաքուր լլայ տառապանքը, այնքան աւելի մեծ կ'ըլլայ յառաջգիմութիւնը: ... Ոչ-բռնութիւնը իր ճայնակի վիճակին մէջ կը նշանակէ գիտակից տառապանք: Ես յանդգնեցայ Հնդկաստանի առջեւ գնել անձնազոհութեան եւ տառապանքի հին օրէնքը: ... Ոչ-բռնութիւնը մեր ցեղին օրէնքն է, ինչպէս որ բռնութիւնը գազանին օրէնքն է: Մարդուն արժանապատեութիւնը կը պահանջէ հնազանդութիւն բարձրագոյն օրէնքի մը, հոգիի զօրութեան: Ես կ'ուզեմ որ Հնդկաստան զործագրէ ոչ-բռնութիւն՝ գիտակից ըլլալով իր զօրութեան եւ ուժին: ... Թէ որ Հնդկաստան բռնութիւնը ընէ իր դաւանանքը, ես չի պիտի ուզէի Հնդկաստանի մէջ ապրիլ: Այն պիտի դադարէր իմ մէջ ունէ հրապարտութիւն արթնցնել: Ոչ-բռնութիւնը անուականութեան պատուանունն է:» (Շարունակելի)

«Հայ Սիրս» Բ. ԼԵՒՈՆԵԱՆ

ԱՂՕԹՔԻ ՄԸ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հըստըն Թէյլըր, նշանաւոր միսիօնարը, աշխարհիս ծանօթ է իբր աղօթիչ գիտցող եւ իր աղօթքներուն պատասխան ստացող մէկը: Տօքթ. և Տիկ. Հովարտի կողմանէ գրուած անոր կինսագրութեան գրեթէ ամէն էջին վրայ կը յիշուի պատասխանուած աղօթք մը:

Քսանմէկ տարեկան եղած տառն, 1833 ին, երբ առաջատանաւի մէջ առաջին անգամ ըլլալով Զինաստան կ'երթար միսիօնարական նպատակով, իր մէկ աղօթքին շատ որոշ պատասխան մը ըստացաւ և իր հաւատքը մեծապէս զօրացաւ: Տէմրիբըրի նեղուցը անցած էին, ուր ընդհանրապէս իրիկունները, արեւ մարը մտնելէն ետքը, թեթեւ հովը կ'սկիւզէր և մինչև արշալոյս կը շարունակէր: Նաւերը գիշեր ատեն մեծապէս կ'օգտը-

ւէին այս հովէն, բայց ցերեկը առագաստները անշարժ կախուած կը մնային իսկ նաւը իր գտնուած տեղը կը մնար, և երբեմն ալ նաւը դէպի հտ կը քաշուէր, որով գիշերը կատարուած յառաջացումին մէկ մասը կը կորսուէր: Հ. Թէյլըր պատմութիւնը այսպէս կը շարունակէ:—

«Շաբաթ գիշեր նոր կուէնիայի հիւսիսային կողմը, յամաքէն 30 մղոն հեռու վտանգաւոր տեղ մը կը գտնուէինք: Կիրակի առտուն կամրջակին վրայ հոգեւոր պաշտամունքի պահուն՝ նաւապետը մտահոգուած երկեցթով մը կրկին ու կրկին քննեց նաւին ուղղութիւնը: Պաշտամունքէն ետքը իր մտահոգութեան պատճառը հասկցուց: Հոսանք մը ժամը 4 մղոն արագութեամբ մեզ դէպի կարգ մը խութիւրը կը քշէր, որոնց այնքան մօտեցած էինք որ յետ միջօրէին մեր կենդանի մնալը անկարելի կը թուէր: Կէսօրուայ ճաչէն վերջը սկսան թրավարել. ամէն մարդ տենդոտ աշխատանքի մղուած էր. բայց այս բուրին հակառակ ըլլալով կարելի չհղաւ դէպի յամաք շարժող նաւին ուղղութիւնը փոխել:

Կամրջակին վրայ պահ մը լուռ կեցանք նաւապետին հետ, որ ետքը սուպէս ըսաւ. «Կարելի ամէն բան ըրինք, արգիւնքին պատահիլէ վատ ուրիշ ծար չունինք:» Անմիջապէս միտքս բան մը եկաւ, և ես պատասխանելով ըսի. «Ո՛չ, տակաւին կայ բան մը զոր չըրինք:» «Ի՞նչ է այդ», հարցուց նաւապետը զարմացումով: «Նաւուն մէջ գտնուող չորս քրիստոնեաներէն ամէն մէկը թող իր խցիկը առանձնանայ, և Տէրոջմէն խնդրէ որ մեզի հով մը ղրկէ. Անիկա մեզի կըրնայ հիմայ շնորհել արեւի մարը մտնելէն ետքը յառաջ եկող հովը», եղաւ պատասխանս:

Նաւապետը ընդունեց այս առաջարկը. ես ալ միւս երկու ընկերներուս

պատմեցի: Չորսերնիս ալ աղօթեցինք
 եւ պատրաստ սպասեցինք պատասխա-
 նին: Իմ աղօթքս կարճ բայց հաճելի
 եղաւ. անմիջապէս համոզուեցայ որ
 մեր խնդիրքը շնորհուած է: Հետեւա-
 բար՝ ալ տառնց սպասելու շուտով կա-
 մրջակը ելայ նորէն: Բոլոր գործերուն
 վրայ հսկող առաջին պաշտօնեային,
 որ անատուած էր, ըսի որ զլիաւոր ա-
 ռագաստը բանայ: Բայց նա կոշտ կեր-
 պով պատասխանեց ըսելով՝ «Ասկէ ի՞նչ
 օգուտ յառաջ կուգայ»: Իսկ իս կըրկ-
 նեցի. «Մենք Աստուծմէ հով մը խընդ-
 րեցինք, որուն պալը մօտալուտ է:
 Մենք պէտք չենք վայրկեան մ'իյնի
 կորսնցնել՝ ժայռելուն շատ մօտեցած
 ըլլալով»: Պաշտօնեան հայհոյելով եւ
 արհամարհալիք դէմքով վը, «Փոխանակ
 հովի մասին լսելու կ'ուզեմք հովը տես-
 նել», ըսաւ, մինչ միկէնոյն ասին կայ-
 մին պապածը կը գիտէր: Ծիշդ այդ
 միջոցին ամենաբարձր կէտը կախուած
 առագաստին ծայրը թեթեւ հովէ մը ըս-
 կած էր շարժել: «Հովին պալը չի՞ս
 տեսներ, մէյ մը կայմին կատարը նա-
 յէ», պոռացի ես: «Ոչ ատիկա շատ
 չնչին բան մ'է, պարզապէս հովին մէկ
 թեթեւ հպումն է», պատասխանեց նա:
 «Կը խնդրեմ», շարունակեցի ես, «ինչ
 որ ալ ըլլայ՝ զլիաւոր առագաստը բա՛ց
 որ անկէ օգտուինք»: Պաշտօնեան յօ-
 ժարեցաւ եւ առագաստը բացաւ: Մէկ
 վայրկեան ետքը հրապետը կամրջա-
 կին վրայ քարոզներուն ազմուկը լսելով
 իր խցիկէն դուրս ելաւ պատճառը հապ-
 կնալու: Սպասուած հովը կը փչէր ար-
 դէն, որուն շնորհիւ մեր նաւը ժամը 6-7
 մղոն արագութեամբ կը յառաջանար,
 հովը չորագրեցաւ մինչեւ որ փէլիւ կըզ-
 գիները անցանք:»

Այս աղօթող եւ սուրբ մարդը պատ-
 մութիւնը սապէս կը վերջացնէ. «Ահա
 այսպէս՝ Չինական ափերը ոտք չկոխած
 Աստուած զիս քաջալերեց թէ Տէր Յիսու-

սի անուան փառաւորութիւն համար ամէն
 պարագայի տակ պէտք եղած օգնութիւ-
 նը պիտի ընէ, երբ աղօթքով ամէն
 պէտքը Անոր ներկայացնենք:»

Անգլ. է Թարգմ.

ԱՅԼԵԻԱՅԼ

ՄԻՋԱԶԳՍՅՈՒՆ ՄԻՍԻՕՆԱՐԱԿԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴԻ յՈՐՈՎԸ

Մերձաւոր Արեւելքի մէջ գործող
 միսիօնարական կազմակերպութեանց
 մեծ մասը միացեալ մարմին մը կազմած
 էին Մ. Ա. ի Միջազգային Միսիօնարա-
 ման Խորհուրդ անունով. Սուրիա, Պա-
 դեստին, Եգիպտոս, այս միութեան
 հատուածները կը կազմեն: Իւրաքան-
 չիւր հատուած տարին անգամ մը ժո-
 դով կ'ունենայ, իսկ Պադեստինի եւ Սու-
 րիոյ հատուածները երկու տարին ան-
 գամ մը միացեալ ժողով մը կ'ունենան:

Սուրիոյ հատուածը այս տարի իր
 ժողովը ունեցաւ Պէյրութի Ամերիկ-
 եան համալսարանի շէնքին մէջ, Մա-
 յիս Էնթին: Այս տարի առաջին ան-
 գամ ըլլալով Հայ. Աւետ. Եկեղեցիինե-
 րու Միութիւնը եւ արարախօս երիցա-
 կան եկեղեցիներու Միութիւնն եւս վե-
 ցական պատուիրակներով ներկայաց-
 ուեցան այս ժողովին մէջ, որ պաշտօ-
 նապէս սկսաւ Մայիս 7-ի գիշերը, բա-
 րեպաշտական հաւաքոյթով մը, որուն
 առաջնորդեց Վեր. Ճէյմս Հ. Նիգոլ՝
 օրուան յարմար պատգամ մը հանելով
 Ասուգի սախօքքէն. «Տեսանողի տունը
 ինծի ցուցուր:»

Յաջորդ օրը հոգեւոր պաշտօնին ա-
 ռաջնորդեց Տր. Ճ. Է. Մէրիլ: «Աւետա-
 րանչաթիւն» էր ժողովին ընդհանուր
 նիւթը՝ որուն կ'ատենապետէր Վեր. Հ.
 Հ. Բիկս այնքան ձեռնհասութեամբ:
 Երեք ճառեր կ'որդացուեցան Միս Մէք-
 տօնաւարի կողմանէ Աւետարանչաթիւն

և Կրթական Գործ նիւթին մասին, Վեր. Ճան Տ. Կրթի կողմանէ Աւետարանչութիւն և Ընկերային Ծառայութիւն նիւթին վրայ, և Տոքթ. Փ. Պրիկսթոքի կողմանէ Աւետարանչութիւն և Բժշկութիւն նիւթին մասին:

Մայիս 9ին, Ուրբաթ օր, չորս ճաշեր կարգացուցան հետեւի ծրագրին համեմատ. — Վեր. Իպրահիմ Տաղիր՝ Եկեղեցիներու Աւետարանչական Դերը, Վեր. Սիսակ Մանուկեան՝ Աւետարանչութիւն Գիւղերուն մէջ, Տիար Անտոնիոս Բալիտ՝ Աւետարանչութիւն և ոչ քրիստոնեաները և Օր. Մ. Լուիզ Լօու Աւետարանչութիւն և Կիներու Գործը: Առաջին երեքը մասնաւոր ուշադրութեան առարկայ զարձան իրենց շահեկանութեան համար:

Այս միութեան անդամակցող տարբեր ազգէ եւ յարանուանութիւններէ միսիօնարութեանց մեծ մասը փոքր մարմիններ են եւ կը գործեն շատ սահմանափակ ջրջաններու մէջ. իսկ կան կարգ մը առաքելութիւններ որոնք տակուին ասկէ դուրս կը մնան:

Բրիտանական Առաքելութիւնը առանց բացառութեան կին անդամներէ կը բաղկանայ, որոնք երբեք տեղացի Գործիչներ չունին իրենց դաշտին մէջ, և գործը ուղղակի իրենք յառաջ կը տանին: Սոյն մարմնի կողմանէ յաջող գործ կը կատարուի Տամասկոսի մօտ, արեւելեան կողմը «Նապաթեան» կոչուած Իսլամ աղանդի մը մէջ: Ուշադրութեան արժանի էր նաեւ Բարեկարգեալ Երիցական Միսիօնարութեան տեղեկագրութիւնը իր մէկ զարմանալի զիւտին մասին, որուն համեմատ Լաթաքիոյ մէջ անոնք այս տարի տեղացի գործիչներու հետ Գործակցական մարմինով մը գործը յառաջ տարած են եւ այս մեթոտը շատ բարերար և արդիւնաւոր եղած է: Կ'արժէ յիշել թէ այս զիւտը աւանդական մէկ սովորութիւնն

է եղած Հայ. Աւետ. Եկեղեցիներու և Պօրտի մէջ:

Այս Միացեալ Մորհորդին զլիաւոր նպատակն է տեղացի և օտար բոլոր միսիօնարական սյժերով գործակցաբար աւետարանչական գործը յառաջ տանիլ: Այս մարմինը ունի կրթական եւ բժշկական ճիւղեր ալ: Առաջինին կողմանէ ժողով մը պիտի կատարուի բոլոր ուսուցիչներու մասնակցութեամբ Սեպ. 6-13ին: Բժշկական ժողովը, որուն կը մասնակցի նաեւ Հալէպի Ալթունեան հիւանդանոցը, արդէն իսկ կատարուած է: Բժշկական ճիւղին կողմանէ թօքախտաւորներու ապաքինարան մը պիտի հաստատուի թիւս Լաթաքիոյ մէջ: Սեպտ. 1-6ին բոլոր քրիստոնեայ գործիչներու համար ամառնային դասընթացք մը պիտի տրուի այս մարմնին նախաձեռնութեամբ: Սոյն կազմակերպութեան կողմանէ վերկարար գործ մը յառաջ կը տարուի անբարոյշավայրերը ինկած աղջիկներու և երիտասարդներու մէջ, որոնց համար ապաստանարան մըն ալ հաստատուած է: Վերջացնելէ առաջ պէտք է յիշել նաեւ յանձնարարութիւն մը ամառնային ժողով մը սարքելու մասին բոլոր երկսեռ ուշաքարհական գործիչներու համար: Ժողովին բնորոշիչ յատկանիշը եղաւ տեղացիներու և միսիօնարներու նոյն նպատակի համար խորհրդակցութիւնը, եւ կը յուսանք որ հետզհետէ տեղացի տարրը աւելի զօրաւոր կերպով պիտի մասնակցի այս միսիօնարական մարմնին:

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՏՆՂՍԻՈՐՈՒՄԸ

Հետեւեալ տեղեկութիւնները ուղղակի քաղուած են Վեր. Ա. Շիրաճեանէ, որ տեղաւումն ունի գրադի և այս նպատակով հինգ անգամ տեղաւորման վայրը փոխած է եւ ներկայիս ալ հոն կը գտնուի:

Տէր-էգ-Զօր կուսակալութիւնը 40600 քառ. քիլոմէթր տարածութիւնն է ՇՍՍՍՍ բնակչութիւն ունի: Զօր Հալէպէն գէպի հարաւային արեւելք ՅՅԾ քիլոմէթր հեռու Եփրատի վրայ շինուած 10 հազար բնակչութիւնով կուսակալանիստ քաղաք մ'է: Տէր-էգ Զօրէն գէպի արեւելք ՇՍ.60 քիլոմէթր տարածութիւնով անապատին ծայրը կը գտնուի Հասիճէ աւանը, իսկ պուրի վրայ, որ Զօրի հարաւային կողմը Եփրատի կը միանայ: Հասիճէի արեւելեան կողմը կը գտնուի դարձեալ Գամըշլը նորաշէն աւանը, որուն կ'երթցուի երկու ճամբով, առաջինը՝ Ճաղճաղ գետով և Թէլ-Համրտ գծով, որ 95 քիլոմէթր երկար է, իսկ երկրորդը՝ Գարաժանիւյէ և Ամուս գիւղերէն անցնող գիծով, որ 165 քիլոմէթր երկար է:

Գամըշլը նոյնանուն Գաղաի կեդրոնն է, հաստատուած Ճաղճաղ գետակին և գերքը, ճիշդ Թուրքիոյ սահմանին վրայ և Նիսիպիս քաղաքին գիմացը, վերջինէն միայն մէկու կէս քիլոմէթր հեռու:

Այս չորս վայրերուն մասին գաղափար մը տալու մասին ստորեւ կը գնենք հետեւեալ վիճակագրական տախտակը, թիւերը տուն կը ցուցնեն:

ՀԱՍԻՃԷ, ԳԱՐԱՄԱՆԻՅԷ, ԱՄՈՒՏ, ԳԱՄՔՇԼԸ				
Հին բնակչութիւն	20	20	00	00
ներկայ »	900	150	450	1050
բոլոր հայեր	200	27	70	430
նորեկ հայեր	?	12	50	300

Թուրքիայէն նորեկ հայ ընտանիքներէն 50ը իրենց գոյքերով և հօտերով կրցած են սահմանը անցնիլ, բայց մնացածը զրեթէ բոլորովին կողոպտուած են, որոնց օգնութեան հասած են ֆրանսական իշխանութիւնը 1375 հօգա ցորեն բաշխելով, և Հալէպի կեդրոնական ինստիտուտը Մարմինը: Մինչև հիմա 120 հօգի, մեծ մասը մանուկ մեռած են: Հիմա հիւանդութիւն չկայ գրեթէ: Բարեկամներու կողմանէ զրկուած է 47 հօգ հագոտեղէն: Խնամատար Մարմինը մինչև հիմա ստացած է 1009 Օսմ. ոսկի, և կը խորհի 200 ընտանիքներու վրան հայթայթիլ, իւրաքանչիւր հողագործի կը

մը, ոչխար մը այծ մը տալ և արհեստաւորներու գործիք հայթայթել և այծ մը և ոչխար մը տալ: Տրամագրելի գումարը հազիւ 250 ընտանիքները պարսպարելու կը բաւէ: Եւ եթէ վրանի տեղ խրճիթ շինուի 10-12 հազար Օսմ. ոսկիի պէտք կը տեսնուի:

Վեր. Մ. Փափագեան, որ Ապրիլ 22ին Պէյրութ հասած էր, Սուրիոյ և Լիբանանի զանազան քաղաքները շրջիլէ վերջ, Մայիս 29, կէսօրը Լիւան Հալէպի Նոյն օրուան գիշերը ընդունելութեան հաւաքոյթ մը կատարուեցաւ խառն բաղձութեան մը ներկայութեան Այդիլիյէի Աւետ. Եկեղեցիին վարի սրահին մէջ:— Մերձաւոր Արեւելքի նպաստամատոցը Ընկ. հան գործը պիտի շարունակէ «Մերձաւոր Արեւելքի հիմնարկութիւն» անուն նոր հիմնարկութիւն մը, որուն վարիչը Մր. Ուրիւմ Ճէսըփ Հալէպ այցելելով խօսեցաւ Պօղ Հայ Սքոյի մէջ Մայիս 28ին:— Կիպրոս հաստատուած բնիկ Այնթապցի կառավարական պաշտօնեայ ճարտարագէտ Պր. Տ. Դաւիթեան, Մայիս 19ին ամուսնացաւ Օր. Վիգթորիայի հետ, դուստրը գեղագործ Պր. Ն. Իշխանեանի, Հալէպ:

(Ծարունակութիւն հո 152ին)

առք. Եկեղեցին է: Հայութեան փրկուածութիւնը չենք փնտռեր այս կամ այն անունով մկրտուելուն մէջ, այլ՝ աւելի զօրաւոր քան երբեք, դարուս պահանջին համեմատ ուսեալ բայց հոգեւոր բարձր կեանքի տէր Եկեղեցականութեամբ օժտուած, հայ կեանքը հոգեւորապէս և բարոյապէս բարձրացնելու մէջ անվախ և ազդու գործունէութեան մղուած, ինքնաբաւ և անկախ Հայ. Առաք. Եկեղեցիի մը գոյութեամբը:

Արդ՝ համակրալիք ուրախութեամբ կ'ողջունենք բոլոր այս բարի երեւոյթները, ու կ'աղօթենք որ մեր Մայր Եկեղեցին աւելի զօրաւոր և պայծառ դուրս գայ այս ճգնաժամային փոխանցումի շրջանէն:

صاحب الامتياز و مدير المسئول

قسيس قريه بت هاروتونيان